ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 01
21.03. 2024 թ. կնքված N ԳՍԱԱԱԹ–ԳՀԾՁԲ-2024/2 այմանագրում փոփոխություն
կատարելու մասին

ք. Երևան 09.04.2024թ.

<<Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն>> -ն (այսուհետև՝ «Գնորդ»), ի դեմս տնօրեն Վ. Մկրտչյանի և մի կողմից և <<Արմինե Նիկողոսյան Վանյայի>>ԱՁ -ն, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 21.03. 2024թ կնքված N ԳՍԱԱԱԹ–ԳՀԾՁԲ-2024/2 գնման պայմանագրի / այսուհետ՝ Պայմանագիր / 7.5 կետով փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ՝

1.1. Կողմերը որոշեցին № ԳՍԱԱԱԹ–ԳՀԾՁԲ-2024/2 (այսուհետև՝ «Պայմանագիր») պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները

- Պայմանագրի 4.1 կետի 6500000 (վեց միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ բառերը փոխարինել 7120000 (յոթ միլիոն մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ բառերով:
- Պայմանագրի հավելված 1 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ավելացնել մատուցվող ծառայություններում ֆիլմերի պատրաստման տևողության ավելացում համաձայն կից հավելված N 1-ի :

հավելված N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | CPV կոդ | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը |
| 1 | 92111100 | 1. 1. «Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի նպատակների, ընթացքի և բովանդակության մասին պատմող 1 հատ ամբողջական հեռուստաֆիլմի նկարահանում, սցենար, անիմացիա, մոնտաժ, գունաբաժանում, հետարտադրական գործընթաց(postproduction): Ֆիլմի նկարահանումները տեղի կունենան Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն ՊՈԱԿ-ի տնօրինության որոշմամբ հաստատված ծրագրով և տարածքներում(գրաֆիկը և տարածքները ենթական են փոփոխության կախված միջոցառման բովանդակային կամ տեխնիկական առանձնահատկություններից): Նկարահանումները պետք է իրականացվի բարձրորակ տեխնիկայով և պետք է ապահովել առնվազն Full HD ֆորմատ: Նկարահանումները պետք է իրականացնել 20-ից 22 նկարահանման օր: Յուրաքանչյուր նկարահանման օր կատարողը պետք է ապահովի առնվազն երեք խցիկ, ստաբիլացնող սարք (DJI Ronin կամ համարժեք), հեռուստակռունկ (առնվազն 7 մետր), ռելս-սայլակ, լուսային սարքեր (առնվազն հինգ միավոր/ikan myulo color 3200-5600 կամ համարժեք), կրծքի երեք անլար և ձեռքի երկու անլար միկրոֆոն (Sennheiser MD 46 կամ համարժեք), ձայնագրող սարք (Conford TASCAM DR680 կամ համարժեք), Full HD ֆորմատով նկարահանելու հնարավորություն ունեցող առնվազն մեկ հատ դրոն: Նկարահանումները կարող են տեղի ունենալ միաժամանակ մեկից ավել վայրում, բայց ոչ ավել քան չորսը: Տեխնիկական բոլոր սարքերը պետք է համալրված լինեն անհրաժեշտ հզորության մարտկոցներով ինքնաբավ աշխատելու համար: Առանձին տեսարաններ պետք է նկարահանվեն դրոնի միջոցով: Մատակարարը պետք է ապահովի նկարահանումից բխող բոլոր սարք-սարքավորումների և անձնակազմի լիակատար մասնակցությունը նկարահանմանը ( ռեժիսոր, սցենարիստ, օպերատորներ, լուսային ձևավորող, ձայնային օպերատոր, տեխնիկ, դիմահարդար (դիմահարդարման իր պարագաներով)): Նկարահանող խումբը պետք է նկարահանի «Դասարան+Դասական» ստեղծագործական, կրթական ծրագրի ամբողջ ընթացքը՝ ընտրական փուլը, բացման և փակման արարողությունները, յոթ վարպետաց դասերը, վեց թատերախմբերի ուսումնական ընթացքը՝ առնվազն 14 օր: Ծրագրի ավարտից հետո ծրագրի ղեկավարների, մասնակիցների, ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների հետ հարցազրույցներ: Ֆիլմում պետք է օգտագործվեն | դրամ | 7120000 | 1 | ք. Երևան Գ.Լուսավորիչ 6 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.05.2024թ ըստ պատվիրատուի պատվերի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | գրաֆիկայով պատրաստված անիմացիոն էֆեկտներ: Ֆիլմի գլխագիրները պետք է պատրաստված լինեն գրաֆիկայով: Ֆիլմում օգտագործվելիք երաժշտությունը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ և ներկայացնել հեղինակային իրավունքը կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթեր: Դինամիկ կադրերով հագեցած ֆիլմի տևողությունը պետք է լինի 45-ից 80 րոպե: Պատվիրատուի կողմից դիտարկումներ կամ նկատառումներ ունենալու դեպքում կատարողը պարտավոր է ուղղումները կատարել մեկ օրացուցային օրվա ընթացքում: Կատարողը պատվիրատուին ֆիլմի նախնական տարբերակը պետք է հանձնի նկարահանումների ավարտից երեք, իսկ վերջնական տարբերակը չորս օրացուցային օրվա ընթացքում: Կատարողը պատվիրատուին ֆիլմի վերջնական տարբերակը հանձնում է երկու օրինակով՝ կոշտ կրիչով:<br><br>2. 2. «Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի նպատակներից բխող 6 թատերախմբերի մասին պատմող 6 հատ ֆիլմի նկարահանում, սցենար, անիմացիա, մոնտաժ, գունաբաժանում, հետարտադրական գործընթաց(postproduction): Ֆիլմի նկարահանումները տեղի կունենան Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն ՊՈԱԿ-ի տնօրինության որոշմամբ հաստատված ծրագրով և տարածքներում(գրաֆիկը և տարածքները ենթական են փոփոխության կախված միջոցառման բովանդակային կամ տեխնիկական առանձնահատկություններից): Նկարահանումները պետք է իրականացվի բարձրորակ տեխնիկայով և պետք է ապահովել առնվազն Full HD ֆորմատ: Նկարահանումները պետք է իրականացվեն 14 օր: Յուրաքանչյուր նկարահանման օր կատարողը պետք է ապահովի վեց նկարահանող խումբ: Յուրաքանչյուր խումբ պետք է կազմված լինի հետևյալ մասնագետներից՝ ռեժիսոր, օպերատոր(առնվազն երկու), սցենարիստ, տեխնիկ, լուսային օպերատոր, դիմահարդար (դիմահարդարման իր նյութերով): Յուրաքանչյուր խումբ իր տնօրինման տակ պետք է ունենա առնվազն երեք խցիկ, ստաբիլացնող սարք (DJI Ronin կամ համարժեք), հեռուստակռունկ (առնվազն 7 մետր), ռելս-սայլակ, լուսային սարքեր (առնվազն վեց միավոր/ikan myulo color 3200-5600 կամ համարժեք), կրծքի երեք անլար և ձեռքի երկու անլար միկրոֆոն (Sennheiser MD 46 կամ համարժեք), ձայնագրող սարք (Conford TASCAM DR680 կամ համարժեք), Full HD ֆորմատով առնվազն մեկ հատ դրոն: Նկարահանումները կարող են տեղի ունենալ միաժամանակ երկու վայրում: Տեխնիկական բոլոր սարքերը ինքնաբավ աշխատելու համար պետք է համալրված լինեն անհրաժեշտ հզորության մարտկոցներով: Առանձին տեսարաններ պետք է նկարահանվեն դրոնի միջոցով: Նկարահանման ընթացքը տևելու է 14 օր, որոնց ընթացքում նկարահանող խումբը պետք է նկարահանի «Դասարան+Դասական» ստեղծագործական, կրթական ծրագրի ամբողջ ընթացքը՝ ընտրական փուլը, բացման և փակման արարողությունները, թատերախմբերի ուսումնական ընթացքը, առնվազն յոթ վարպետաց դասեր, ծրագրի ղեկավարների, մասնակիցների, ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների հետ հարցազրույցներ: Ֆիլմում պետք է օգտագործվեն գրաֆիկայով պատրաստված անիմացիոն էֆեկտներ: Ֆիլմի գլխագիրները պետք է պատրաստված լինեն փ գրաֆիկայով: Ֆիլմում օգտագործվելիք երաժշտությունը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ և ներկայացնել հեղինակային իրավունքը կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթեր: Դինամիկ կադրերով հագեցած ֆիլմի տևողությունը պետք է լինի 35-ից 60 րոպե: Պատվիրատուի կողմից դիտարկումներ կամ նկատառումներ ունենալու դեպքում կատարողը պարտավոր է ուղղումները կատարել մեկ օրացուցային օրվա ընթացքում: Կատարողը պատվիրատուին ֆիլմի նախնական տարբերակը պետք է հանձնի նկարահանումների ավարտից երեք, իսկ վերջնական տարբերակը՝ չորս օրացուցային օրվա ընթացքում: Կատարողը յուրաքանչյուր ֆիլմը պատվիրատուին է հանձնում առանձին կոշտ կրիչով՝ երկու օրինակից:<br><br>3. 3. «Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի ընթացքում բեմադրված հաշվետու 5 ներկայացումների նկարահանում, մոնտաժ, գունաբաժանում, հետարտադրական գործընթաց(postproduction): Ներկայացումների նկարահանումները տեղի կունենան Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն ՊՈԱԿ-ի տնօրինության որոշմամբ հաստատված ծրագրով և տարածքներում(գրաֆիկը և տարածքները ենթական են փոփոխության կախված միջոցառման բովանդակային կամ տեխնիկական առանձնահատկություններից): Նկարահանումները պետք է իրականացվի մեկ օրում, բարձրորակ տեխնիկայով և պետք է ապահովել առնվազն Full HD ֆորմատ: Նկարահանումները պետք է իրականացնել 1 օրում: Կատարողը պետք է ապահովի նկարահանող խումբ կազմված հետևյալ մասնագետներից՝ ռեժիսոր, օպերատոր(առնվազն 6), տեխնիկ, ինժեներ, լուսային օպերատոր, ձայնային օպերատոր, ձայնային ռեժիսոր, առնվազն երկու դիմահարդար (դիմահարդարման իրենց նյութերով): Խումբն իր տնօրինման տակ պետք է ունենա առնվազն յոթ խցիկ, ստաբիլացնող սարք (DJI Ronin կամ համարժեք), հեռուստակռունկ (առնվազն 7 մետր), ռելս-սայլակ, լուսային սարքեր (առնվազն տասը միավոր/ikan myulo color 3200-5600 կամ համարժեք), գլխի անլար միկրոֆոն 10 հատ (Sennheiser HSP 4-EW կամ համարժեք), ձեռքի երկու անլար միկրոֆոն (Sennheiser MD 46 կամ համարժեք), ձայնային վահանակ (12 մուտք), ձայնագրող սարք (առնվազն 12 ուղի): Տեխնիկական բոլոր սարքերը ինքնաբավ աշխատելու համար պետք է համալրված լինեն անհրաժեշտ հզորության | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտկոցներով: Կատարողը պետք է ապահովի «Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի ընթացքում բեմադրված 5 ներկայացումների նկարահանումը: Յուրաքանչյուր ներկայացման համար պետք է պատրաստվեն անիմացիոն գրաֆիկական գլխադիրներ: Պատվիրատուի կողմից դիտարկումներ կամ նկատառումներ ունենալու դեպքում կատարողը պարտավոր է ուղղումները կատարել մեկ օրացուցային օրվա ընթացքում: Կատարողը պատվիրատուին նախնական տարբերակները պետք է հանձնի նկարահանումների ավարտից երեք, իսկ վերջնական տարբերակը՝ չորս օրացուցային օրվա ընթացքում: Կատարողը յուրաքանչյուր ներկայացումը պատվիրատուին է հանձնում առանձին կոշտ կրիչով՝ երկու օրինակից: | | | | | |
| 2 | 79341100 | Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի համար գովազդային հոլովակի պատրաստում : Նկարահանող խումբը պետք է կազմված լինի 3 օպերատորից , գովազդային հոլովակի նկարահանումը տևելու է 2 օր վերջնական տարբերակը լինելու է 35-40 վարկյան : Գովազդայի հոլովակը պետք է ներկայացնի Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի բուն էությունը : Կատարողը պետք է ապահովի առնվազն երկու խցիկ, ստաբիլիզատոր սարք (DJI Ronin կամ համարժեք) , լուսային սարքեր(առնվազն 5 միավոր ikan myulo color 3200-5600k կամ համարժեք), գլխի անլար միկրոֆոն (Sennheiser HSP 4-EW կամ համարժեք) և ձեռքի անլար միկրոֆոն(Sennheiser MD 46 կամ համարժեք) ձայնագրող սարք: Տեխնիկական բոլոր սարքերը պետք է համալրված լինեն անհրաժեշտ հզորության ակումուլյատորներով, անհրաժեշտության դեպքում ինքնարավ աշխատելու համար: | դրամ | 300000 | 1 | ք. Երևան Գ.Լուսավորիչ 6 | Պայմանագրի կնքման օրվանից 5 օրացուցային օր |

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագրի ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
2.3. Սույն համաձայնագրով Պայմանագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
2.4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որորնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
« ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ » ՊՈԱԿ
Հայաստան Երևան Գ.Լուսավորիչ 6
Բանկ՝ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆ
Հ/Հ 900018001496
ՀՎՀՀ 02521652
տնօրեն՝ Վարդան Մկրտչյան

ստորագրություն

ԿԱՏԱՐՈՂ
<<Արմինե Նիկողոսյան Վանյայի>>ԱՁ
ք. Երևան , Լենինգրադյան փ 6/7
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2474602871020000
ՀՎՀՀ 27985313
Տնօրեն՝ Արմինե Նիկողոսյան

ստորագրություն